

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 1**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2021**

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

*Խմբագրական խորհուրդ՝*

**Միքայել Մալխասյան** (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

*Редакционная коллегия:*

**Микаэл Малхасян** (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

*Editorial Board:*

**Mikayel Malkhasyan** (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

# ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ / CONTENT

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

<b>Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН</b> .....	7
<b>Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար - ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵՂԱԿԱՆ ԵՎ ԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ</b> .....	22
<b>Vigen Tsatryan, Ruslan Kobzar - TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGHT OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES</b> .....	22
<b>Արգիշտի Վարդանյան - ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՂՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇՁԳՐՏՈՒՄ</b> .....	23
<b>Аргишти Варданян - ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ</b> ....	29
<b>Argishti Vardanyan - A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY</b> .....	29
<b>Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ</b> .....	30
<b>Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ</b> .....	38
<b>Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16<sup>TH</sup> CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS</b> .....	38
<b>Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՈՈՄԻ ՊԻՈՒՄ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b> .....	39
<b>Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX</b> .....	54
<b>Feliks Movsisyan - THE MAGAZINE “THE MASYATS AGHAVNI” ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER</b> .....	55
<b>Հովիկ Գրիգորյան - ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱՃ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ)</b> .....	56
<b>Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.)</b> .....	72
<b>Novik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)</b> .....	73
<b>Գայանե Հովհաննիսյան - ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ.</b> .....	74
<b>Гаяне Оганнисян - ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. - В 1930-Х ГГ.</b> .....	82
<b>Gayane Hovhannisyan - DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S - IN THE 1930S</b> .....	83
<b>Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.)</b> .....	84

<b>Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.).....</b>	<b>89</b>
<b>Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994).....</b>	<b>89</b>
<b>Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....</b>	<b>90</b>
<b>Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ.....</b>	<b>95</b>
<b>Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY .....</b>	<b>95</b>
<b>Լիլիթ Սալարյան – ԶԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ).....</b>	<b>96</b>
<b>Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ).....</b>	<b>103</b>
<b>Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) .....</b>	<b>103</b>
<b>Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍԱՍՅԱԿԱՆԵՐՈՒՄ... 104</b>	<b>104</b>
<b>Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА.....</b>	<b>113</b>
<b>Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20<sup>TH</sup> CENTURY AND THE TWO DECADED OF THE 21<sup>ST</sup> CENTURY .....</b>	<b>114</b>
<b>Էդգար Չախոյան – ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՈՒՄ ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2019 ԹԹ.).....</b>	<b>115</b>
<b>Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.).....</b>	<b>134</b>
<b>Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019).....</b>	<b>135</b>
<b>ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY /</b>	
<b>Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԱՆԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՍ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....</b>	<b>136</b>
<b>Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) .....</b>	<b>146</b>
<b>Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY).....</b>	<b>147</b>
<b>Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՉԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻԱՄԻ ՓՆՏՐՏՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ.....</b>	<b>148</b>
<b>Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. ....</b>	<b>155</b>

**Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO** ..... 155

**ԱՐՇԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

**Աննա Դավթյան – 13-րդ դարի խաչքարերի շարժապատկեր**..... 156

**Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА**..... 164

**Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13<sup>TH</sup> CENTURY KHACHKARS (CROSS-STONES)**..... 164

**Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱԹԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻՉԱՅՆԸ**..... 172

**Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ** ..... 175

**Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA “НОКТЕМБЕР” IN GYUMRI** .... 176

**Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼԼԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՍՈՒԼԻ ԱԶԵՐԵՐՈՎ** ..... 177

**Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ** ..... 187

**Zahra Maleqi – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI**..... 187

**Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄԸ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ**.... 188

**Марине Геворкян, Гаяне Товмасын – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ** ..... 198

**Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION** ..... 198

**ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES**

**Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ**..... 199

**Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ**..... 204

**Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSIS’ “HISTORY OF THE ARMENIANS”** ..... 205

**Վահագն Հակոբյան – ԴՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ** ..... 206

**Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА**..... 218

**Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN’S LETTERS**..... 218

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

**Լիլիթ Մինասյան – ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԸՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)**..... 219

**Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) .....** 229

**Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH).....** 229

**Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....** 230

**Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ .....** 236

**Meri Hovhannisyán - FEATURES OF USING THE DEBATE METHOD.....** 236

**Արմեն Խաչիկյան - ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒՃԵՐՈՒՄ.....** 237

**Армен Хачикян - ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА .....** 246

**Armen Khachikyan - MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES.....** 246

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS**

ԱՐՏԱԿ ՄՈԿՍԻՍՅԱՆ, ՄԻԶԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲԱՂԱԲՅՈՒՐՆԵՐԻ ԶՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷԶ:.....

247

ՀՈԿՆԱՆ ԶԱՆՅԱՆ (ՀՈԿՀԱՆՆԵՍ ԱՂԱԶԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈԿ, ԵՐ., ԷՂԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷԶ:.....

247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՉ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐԶԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷԶ:.....

250

ՆՈՐ ԳԻՐԶ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Յ. Գ. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ-ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.)..

252

**ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ**

ԱՇՈՏ ՄԵԼԵՈՆՅԱՆ.....

255

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ.....

258

**ՀԱԿԵՐԺԻ ԵԱՍՓՈՐԴ**

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021).....

263

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....** 266

**INFORMATION ABOUT THE AUTHORS .....** 267

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ .....** 268

**NOTICE FOR THE AUTHORS .....** 268

**«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ .....** 269

## Արմեն Խաչիկյան

**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՈԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ  
ՍՈՑԻՍԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԶՅ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ**

**Հիմնաբառեր.** հայկական բանակ, զինված ուժեր, ռազմական սոցիոլոգիա, ռազմասոցիոլոգիական հետազոտություն, զինվորական կոլեկտիվ, սոցիոմետրիա, զինվորական առաջնորդություն:

*Զինված ուժերում սինժառայողների շրջանում առաջնորդության հիմնահարցը ենթակա է բազմազործոն և համակողմանի չափման, որի նպատակով սույն հոդվածում հիմք է ընդունվում ռազմասոցիոլոգիական մեթոդաբանությունը և կիրառվում սոցիոմետրիկական մեթոդը: Սոցիոմետրիկական ուսումնասիրությունների կարևորությունը ՀՀ զինված ուժերում պայմանավորված է հատկապես նրանով, որ այստեղ գործող համայնքային խառը սկզբունքը (կորակոչային և պայմանագրային սկզբունքների համադրումը), ինչպես նաև զինվորական կոլեկտիվում ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի և առաջնորդության համապատասխան մոդելների համակցվածությունն ու հարաբերական կոնֆլիկտայնությունն ստեղծում են բանակի ներսում տեղի ունեցող սոցիալական գործընթացների մարդկային գործոնի մշտականման և կառավարման անհրաժեշտություն: Մեթոդի կիրառումը հնարավորություն տվեց դուրս բերելու առաջնորդության չափման ցուցանիշները սինժառայողների շրջանում և հայտնաբերելու ոչ ֆորմալ առաջնորդներին:*

### Նախաբան

ՀՀ զինված ուժերի հիմնախնդիրներն ու դրանց բացահայտման և լուծման կարևորությունն անկախությունից ի վեր բանակաշինության գործընթացի մի մասն է, ինչը նաև հատուկ նշանակություն ունի ռազմասոցիոլոգիական հետազոտությունների շրջանակներում<sup>1</sup>: Սույն հոդվածում քննության է առնվում ռազմական համակարգում առկա կարևորագույն հիմնախնդիրներից մեկը՝ առաջնորդության հիմնահարցը զինվորական կոլեկտիվներում, մասնավորապես՝ առաջնորդության չափման սոցիոլոգիական մեթոդներից մեկի՝ սոցիոմետրիայի կիրառությունը ՀՀ զինված ուժերում: Մեթոդի կիրառական նշանակությունը խիստ արդիական է՝ հաշվի առնելով գերժամանակակից բանակներում ներդրման փորձն ու հայկական բանակում կիրառման անհրաժեշտությունը:

Հարկ է նշել, որ բանակը՝ որպես սոցիալական ինստիտուտ, իր կառուցվածքային առանձնահատկություններով և գործառույթներով հարաբերականորեն փակ կառույց է, որի ուսումնասիրությունն օբյեկտիվորեն սահմանափակ է<sup>2</sup>: Բանակն առանձնահատուկ է ոչ միայն իր կառուցվածքով և իրականացվող գործառույթներով, այլև ներքին կազմակերպական մշակույթով և իր անդամների միջև ձևավորվող ենթամշակույթներով:

Հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական փոփոխարարությունները, տարածված նորմերն ու արժեքները, վարքային մոդելները, ինչպես նաև հիմնախնդիրներն ու սոցիալական գործընթացներն արտացոլվում են բանակում՝ պայմանավորելով բանակի՝

\* Հոդվածը ներկայացվել է 16.06.2021 թ., գրախոսվել՝ 19.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

<sup>1</sup> Խաչիկյան Ա., Բանակը որպես սոցիալական ինստիտուտ. ՀՀ ՁՈՒ-ի և սինժառայության նկատմամբ վերաբերմունքի և դրանց հեղինակության ապահովման պրոբլեմները, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2019, 4(102), էջ 76:

<sup>2</sup> Աթանեսյան Ա., Շաքարյան Ա., Ավետիսյան Վ., Ավետիսյան Ա., Հարությունյան Դ., Զինվորական առաջնորդություն: Զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ, Երևան, 2012, էջ 25:

որպես սոցիալական ինստիտուտի կառուցվածքային առանձնահատկությունները, մարտունակությունը, զինվորական կոլեկտիվներում առկա փոխհարաբերությունները<sup>1</sup>: Ռազմական սոցիոլոգիան կարևոր դեր է խաղում բանակում և հասարակությունում զարգացող սոցիալական հարաբերությունների և գործընթացների ախտորոշման և կանխատեսման, ինչպես նաև վարչական կառույցների համար առողջ գիտական առաջարկությունների մշակման գործում:

Չինված ուժերի մարտունակությունն ու նրանց առաջ դրված խնդիրների կատարման արդյունավետությունն առաջին հերթին կախված է բանակի մարդկային ներուժից՝ զինծառայողներից, որոնք բանակի հիմնական կորիզն են: Սակայն զինված ուժերի, այդ թվում՝ տեխնիկական միջոցների կառավարման և գործադրման հիմնական սուբյեկտը մնում է զինծառայողը՝ իր անձնային կարողություններով և առանձնահատկություններով, ֆիզիկական և մտավոր ներուժով, սոցիալ-հոգեբանական նկարագրով և սոցիալական հարաբերությունների ամբողջությամբ:

Չինվորական կոլեկտիվի անդամների շրջանում գոյություն ունեցող ենթամշակույթները հաճախ հակասում են բանակի ընդհանուր մշակույթին և կանոնակարգվածությանը, ինչի հետևանքով խախտվում է զինվորական կոլեկտիվի միասնականությունը, անկում է ապրում մարտական ոգին, նվազում են փոխգործության հնարավորությունները<sup>2</sup>:

Այսպիսով՝ զինված ուժերում զինծառայողների շրջանում առաջնորդության հիմնահարցը ենթակա է բազմազործոն և համակողմանի չափման, որի նպատակով սույն հոդվածում հիմք է ընդունվում ռազմասոցիոլոգիական մեթոդաբանությունը, և կիրառվում է սոցիոմետրիկական մեթոդը:

### **Առաջնորդության հիմնահարցերը զինվորական կոլեկտիվում**

Բանակը, լինելով հարաբերականորեն փակ համակարգ, իր գործառնության մեջ հենվում է հիմնականում ներքին մշակույթի, կանոնակարգի, վարքը կարգավորող **ֆորմալ և ոչ ֆորմալ սկզբունքների** վրա: Չինվորական կոլեկտիվի առանձնահատկություններից մեկն այն է, որ խմբի անդամները փոխգործում են և ունեն ներխմբային շփման առանձնահատուկ ձևեր. և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ աստիճանակարգությունում միջանձնային հարաբերությունները կարգավորվում են հստակ սահմանված, զինվորական գործունեության յուրահատկությամբ պայմանավորված նորմերով: Չինվորական կոլեկտիվի արտաքին՝ պաշտոնական կազմակերպությունը պայմանավորում է նրա ֆորմալ կառուցվածքը՝ վաշտի հրամանատար, դասակի հրամանատար, դասակի փոխհրամանատարներ և այլն: Ֆորմալ հարաբերությունները խմբի ներսում որոշված են զինծառայողների պաշտոնական դիրքով, կանոնադրություններով, զինվորական երդմամբ, հրահանգներով ու հրամաններով: Ֆորմալ առումով զինվորական կոլեկտիվը երկրորդային խումբ է, որն իր մեջ ներառում է բազմաթիվ առաջնային խմբեր: Վերջիններս ներքին՝ ոչ պաշտոնական կազմակերպության հիմքն են և ապահովում են խմբի ոչ ֆորմալ սոցիալ-հոգեբանական կառուցվածքը<sup>3</sup>: Ընդ որում՝ եթե բանակում անձնակազմի փոխհարաբերությունների կանոնադրական մեխանիզմները չեն գործում, կամ դրանք ներկայացնող մարմինները թույլ են, հեղինակագուրկ, անարդյունավետ, ապա դրանց բնականոն կերպով փոխարինելու են գալիս զինվորական կոլեկտիվի մեջ մտնող այս կամ այն ենթամշակույթը ներկայացնող խմբի ոչ ֆորմալ արժեքներն ու նորմերը՝ իրենց ներկայացուցիչներով: Դրանով են բացատրվում զինվորական կո-

<sup>1</sup> Աթանեսյան Ա., Մկրտիչյան Ա., Ավետիսյան Ա., Սահակյան Ա., Մարգարյան Վ., Մախալկինա Մ., Բանակ և հասարակություն. ժամանակակից հիմնախնդիրներ: Ուսումնական ձեռնարկ բուհերի և ռազմական հաստատությունների համար, Երևան, 2013, էջ 21:

<sup>2</sup> Handbook of the Sociology of the Military, Ed. by Giuseppe Caforio. NY, Springer, 2006, p. 237-238.

<sup>3</sup> Ռազմական սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու, խմբ.՝ Լ. Հարությունյանի, Երևան, 2005, էջ 180-181:



լեկտիվներում (առհասարակ՝ բանակում) ոչ կանոնադրական հարաբերությունների առկայությունն ու դրսևորումները՝ ի հակադրումն ֆորմալ հարաբերությունների, նորմերի և կանոնների<sup>1</sup>:

Ինչպես նշվեց, **ոչ կանոնադրական հարաբերությունները զինվորական կոլեկտիվում** առաջնորդության ոչ ֆորմալ մեխանիզմների կիրառման փորձ են, ուղեկցող միջոց՝ կառավարման կանոնադրական մեխանիզմներին զուգընթաց: Այսպես, զինված ուժերում հանցանքների եական մասը կազմում են ոչ ֆորմալ հարաբերությունների և ոչ ֆորմալ առաջնորդության հակականոնադրական դրսևորումների հետևանքով առաջ եկած կոպիտ խախտումները, մասնավորապես՝ ենթակաների նկատմամբ կիրառված բռնությունը, «դեդոլչինան» և այլն<sup>2</sup>: **Ոչ կանոնադրական փոխհարաբերությունները** ռազմասոցիոլոգիական հետազոտությունների համակարգում սահմանվում են որպես ցանկացած հարաբերություններ, որոնք անպատիժ մնալու հետևանքով սրվում են՝ ընդհուպ հանգեցնելով հանցավոր վարքի դրսևորումների, այդ թվում՝ զինծառայողների ցանկացած խմբի կամ առանձին ներկայացուցիչների կողմից զինակիցների անձի և իրավունքների հանդեպ սպառնալիքի: Ընդ որում՝ ոչ կանոնադրական փոխհարաբերությունների սոցիալ-հոգեբանական բովանդակությունը ներառում է «ինքնահաստատման, վարքի, հարաբերությունների անհատական կամ խմբային շեղվող ձևեր, ինչպես նաև բացասական սովորություններ, խմբային կեղծ ավանդույթներ, զինծառայողների մոտ նյարդային խախտումներ և բռնկվող հոգեվիճակներ, որոնց հետևանքով իրենք նվաստացնում են զինակիցների անձնական արժանապատվությունը»<sup>3</sup>: Ոչ կանոնադրական հարաբերությունների ամբողջությունն ու ՀՀ զինված ուժերի կողմից դրանց դրսևորումների բազմաձևությունը ժառանգվել են խորհրդային բանակից, ինչպես նաև արդի հայաստանյան հասարակության սոցիալ-հոգեբանական հարաբերություններից և բարոյահոգեբանական վիճակից:

### Սոցիոմետրիկական ուսումնասիրությունների նշանակությունը

Ռազմական սոցիոլոգիայի շրջանակներում զինվորական կոլեկտիվի ուսումնասիրություններն ավանդական են և ունեն մեծ նշանակություն՝ մշտազննելու բանակի մարդկային ներուժի վիճակը, կառավարելու և կարգավորելու բանակի մարտունակության տեսանկյունից կարևորվող միջանձնային և միջխմբային հարաբերությունները զորամասերում, հարթելու այդտեղ առաջ եկող տարաբնույթ հակասությունները և կոնֆլիկտները, բացահայտելու զինվորական կոլեկտիվի ոչ ֆորմալ առաջնորդներին և ուղղորդելու նրանց ակտիվությունը զորամասում կարգուկանոնի ու կանոնադրական հարաբերությունների ապահովմանը: Այդ նպատակներին են ծառայում, մասնավորապես, սոցիոմետրիան (լատիներեն՝ *societas* - հասարակություն, հունարեն՝ *metria* - չափել):

Ինչպես նշում են հեղինակները, «Սոցիոմետրիան առաջացել է 1914-1918 թվականներին՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Սոցիոմետրիկական տեխնիկական մշակվել է Չ. Ֆրոյդի աշակերտ, հայտնի հոգեբույժ և սոցիոլոգ Ջ. Մորենոյի կողմից: Այն օգտագործվում է միջանձնային և միջխմբային հարաբերությունների ախտորոշման, փոփոխման, բարելավման և կատարելագործման նպատակով»<sup>4</sup>:

Սոցիոմետրիկական ուսումնասիրությունների կարևորությունը ՀՀ զինված ուժերում պայմանավորված է հատկապես նրանով, որ այստեղ գործող համալրման խառը սկզբունքը

<sup>1</sup> *Տե՛ս օրինակ՝ Handbook of the Sociology of the Military, Ed. by Giuseppe Caforio, p. 239:*

<sup>2</sup> *Տե՛ս օրինակ՝ Мацкевич И., Преступность в армейской среде, «Социологические исследования», 2000, № 4, с. 53-56:*

<sup>3</sup> *Образцов И., Формы проявления неуставных отношений, «Социологические исследования», 1996, № 2, с. 63-72.*

<sup>4</sup> *Батыгин Г., Лекции по методологии социологических исследований, М., 1994, с. 12; Золотовицкий Р., Социометрия Я. Л. Морено: Мера общения, «Социологические исследования», 2002, N 4, с. 105; Морено Я., Социометрия. Экспериментальный метод и наука об обществе, Пер. с англ. А. Бобовикова, М., 2001, с. 47.*

(գորակոչային և պայմանագրային սկզբունքների համադրումը), ինչպես նաև զինվորական կոլեկտիվում ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի և առաջնորդության համապատասխան մոդելների համակցվածությունն ու հարաբերական կոնֆլիկտայնությունը ստեղծում են բանակի ներսում տեղի ունեցող սոցիալական գործընթացների մարդկային գործոնի մշտազննման և կառավարման անհրաժեշտություն: Ինչպես այդ կապակցությամբ նշում են հեղինակները, սոցիոմետրիայում լայնորեն տարածված է ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի հասկացությունը: Այստեղից բխում է սոցիոմետրիկական մեթոդի նշանակությունը, որը թույլ է տալիս.

1. Բացահայտել փոքր և ռեֆերենտ (ելակետային, կողմնորոշիչ) խմբերի ոչ ֆորմալ առաջնորդներին: Նրանց բացահայտման դեպքում ստեղծվում են բարենպաստ նախադրյալներ՝ մի կողմից նրանց գործողությունները վերահսկելու և մյուս կողմից՝ այդ գործողությունները ուղղորդելու՝ ծառայության պահանջներին համապատասխան: Նման համագործակցությունը ներկայումս էլ այս կամ այն չափով առկա է ՀՀ ՉՈՒ-ում սպաների և ոչ ֆորմալ առաջնորդների միջև, սակայն կրում է իրավիճակային, անկայուն բնույթ, իսկ ոչ ֆորմալ առաջնորդների մի մասի գործունեությունը՝ «ստվերային»՝ ոչ ակնհայտ բնույթ: Մեթոդի կիրառումը թույլ կտա այդ համագործակցությանը տալ առավել կազմակերպված և ծառայության պահանջներին համապատասխան բնույթ:

2. Վեր հանել կոլեկտիվներում մեծամասնության կողմից մերժված խմբին: Նման անձանց հայտնաբերումը կարևորվում է նրանց և նրանց շրջապատի հետ համապատասխան սոցիալ-հոգեբանական դաստիարակչական աշխատանքներ տանելու տեսանկյունից: Այն հնարավորություն է ստեղծում կանխարգելելու հավանական փոխադարձ բռնարարները և ինքնավնասման դեպքերը:

3. Հայտնաբերել խմբի պոտենցիալ առաջնորդներին, որոնք արժանի են նշանակվելու կոլեկտիվում տարբեր ղեկավար պաշտոններում: Չնայած այն փաստին, որ ՀՀ ՉՈՒ-ում սկսել է կայանալ պայմանագրային սերժանտների ինստիտուտը, դեռևս գործում է կրտսեր հրամանատարական կազմը (սերժանտներ, ավագներ) ուսումնական գումարտակներում սերժանտական դասընթացներ անցած զինծառայողներով համալրելու պրակտիկան: Սակայն նրանց ճշող մեծամասնությունը չունի առաջնորդին բնորոշ հատկանիշներ, չի կարողանում խմբում զուգակցել ֆորմալ և ոչ ֆորմալ առաջնորդի դերերը, հետևաբար արդյունավետ չի ղեկավարում իր ենթականերին: Խմբում ոչ ֆորմալ առաջնորդի դերին ու կարգավիճակին հավակնող անձանց հայտնաբերելուց և նրանց հետ համապատասխան գաղափարադաստիարակչական աշխատանքներ տանելուց հետո կարելի է ընդգրկել նրանց կրտսեր հրամանատարական կազմում:

4. Ուսումնասիրել աշխատանքային խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտն ու նրա փոփոխության միտումները: Մեթոդի պարբերական կիրառումը զինվորական կոլեկտիվներում թույլ կտա արձանագրել խմբային դինամիկան՝ կրկին հնարավոր դարձնելով կոնֆլիկտային ռիսկերի բացահայտումն ու կառավարումը: Յուրաքանչյուր զորացրում և զորակոչ, որպես կանոն, ենթադրում են ոչ միայն ֆորմալ խմբերի կազմի փոփոխություն, այլև հանգեցնում են ոչ ֆորմալ նորմերի էական փոխակերպումների՝ խմբում նոր արժեքների և աշխարհայացքների ներմուծմամբ: Սոցիոմետրիկական մեթոդի պարբերական կիրառումը թույլ կտա բացահայտել ոչ ֆորմալ նորմերի այնպիսի դրսևորումներ, որոնք ենթադրում են խմբային կառուցվածքի վերակազմավորումը ըստ փոփոխված չափանիշների, օրինակ՝ խնդիրների լուծման նախկինում կիրառվող ուժային տարբերակները փոխարինվում են փողոցային ձևախեղված գաղափարներով՝ արարքի հիմնավորված կամ չհիմնավորված լինելու պատճառաբանություններով, բացատրական, ավելի հանդուրժողական մոտեցումներով, որևէ երևույթ պիտակավորվում է կամ հակառակը: Այսպիսով, ուրվագծվում է սոցիոմետրիկական մեթոդի կիրառման երկու հիմնական ուղղություն. մի դեպքում՝ կայուն գործող խմբի ներսում

կոնկրետ անհատների միջև փոխհարաբերությունների չափում, մյուս դեպքում կոնկրետ անհատներից և կոնկրետ հարաբերություններից վերացարկված, դրանցից հարաբերականորեն անկախ ոչ ֆորմալ նորմերի փոխակերպումների չափում:

5. Վեր հասել գործոնները, որոնք հրահրում են փոքր սոցիալական խմբերում միջանձնային և միջխմբային կոնֆլիկտներ: Հատկապես կարևոր է օգտագործել տվյալ մեթոդը ծայրահեղ կամ դրան մոտ պայմաններում, նաև էական է զգացմունքային հարաբերությունների ազդեցությունը համատեղ գործունեության արդյունքների վրա: Դրա լավագույն օրինակ կարող է հանդիսանալ մարտական հերթապահությունը:

Սոցիոմետրիկական հետազոտության առարկա կարող են լինել ինչպես խմբի սոցիոմետրիկական կառուցվածքը, այնպես էլ խմբի առանձին անդամների սոցիոմետրիկական դիրքը: Վերը նշված գործոններն առաջադրում են բանակում սոցիոմետրիկական հետազոտության իրականացման ընթացքում հարցվողների անձնական անվտանգության և պաշտպանվածության խնդիր, ինչն էապես կախված է հարցումն իրականացնողի ով լինելուց, նրա նկատմամբ վստահության անհրաժեշտ պաշարի առկայությունից կամ դրա բացակայությունից: Ելնելով սոցիոմետրիկական հետազոտության պահանջներից՝ հետազոտություն անցկացնողը պետք է չլինի հետազոտվող խմբի անդամ կամ զինվորական (տվյալ ստորաբաժանման անդամ)՝ ժամկետային զինծառայողների կողմից հնարավոր անվստահության պատճենները չեզոքացնելու կամ մեղմելու համար: Հարցումների արդյունքների օգտագործման անցանկալի հետևանքներից խուսափելու և լիարժեք անանունություն ապահովելու համար նախընտրելի է, որ հետազոտությունն իրականացնի ՊՆ կողմից պատվեր ստացած որևէ անկախ սոցիոլոգիական կազմակերպություն կամ ՊՆ կից քաղաքացիական անձանցով համալրված համանման այլ ծառայություն»<sup>1</sup>:

### Սոցիոմետրիայի կիրառման միջազգային փորձը

Սոցիոմետրիկական մեթոդներն ակտիվորեն օգտագործվում են Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ռազմական հոգեբանների կողմից: Տարբեր երկրների զինվորական կոլեկտիվներում կիրառելիս հաշվի են առնվում այն բաղադրիչները, որոնք զգայուն են տվյալ երկրի մշակույթի նկատմամբ<sup>2</sup>: Սոցիոմետրիկ տվյալներն օգնում են բանակի հրահանգիչներին և գնահատողներին լրացնել, օպտիմիզացնել մոնիտորինգի և գնահատման առկա մեթոդները: Սոցիոմետրիան կիրառվում է ԱՄՆ բանակի սպայական թեկնածուի դպրոցի (U.S. Army's Officer Candidate School: OCS) առաջնորդների գնահատման նպատակով<sup>3</sup> և հնարավորություն է տալիս դուրս բերել և օգտագործել զինծառայողների առաջնորդության ցուցանիշները:

Ըստ ժամանակակից հետազոտական միտումների՝ առաջնորդության հասարակական և փոխհարաբերությունների միջավայրի ուսումնասիրման կիրառելի մեթոդ է սոցիոմետրիկական ցանցային վերլուծությունը, որն օգտագործվում է փոխհարաբերությունների սոցիալական ցանցի տարբեր կառուցվածքներում առաջնորդության ուսումնասիրության համար՝ ներառյալ մտերմությունը, հարգանքը, վստահությունը, ազդեցությունը, ուժը և ընկալումը: Այս ցանցերը կարելի է դիտել անհատական տեսանկյունից, որը նկարագրում է սոցիալական դիրքում անձի դիրքի ուժը, կամ դրանք կարող են դիտվել ավելի լայն հեռանկարից՝ ուսումնասիրելով ցանցի կառուցվածքը՝ խտությունը և կենտրոնացումը<sup>4</sup>:

<sup>1</sup> Միքայելյան Զ., Ժամկետային զինծառայողների վարքի կարգավորման ոչ ֆորմալ նորմերի ուսումնասիրումը սոցիոմետրիկական մեթոդի շրջանակներում, «ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի տարեգիրք - 2008», Երևան, 2009, էջ 188-191:

<sup>2</sup> Jennings H., *Military Use of Sociometric and Situation Tests in Great Britain, France, Germany and the United States. Sociometry*, vol. 12, no. 1/3, 1949, pp. 191-201. JSTOR, [www.jstor.org/stable/2785386](http://www.jstor.org/stable/2785386). Accessed 9 May 2021.

<sup>3</sup> Sams M., *Sociometric Indicators of Leadership: An Exploratory Analysis*, U.S. Army Research Institute for the Behavioral and Social Sciences, 2018, p. 7.

<sup>4</sup> Carter D., DeChurch L., Braun M., Contractor N., *Social network approaches to leadership: An integrative conceptual review. Journal of Applied Psychology*, 2015, 100, 597-622.

Սոցիոմետրական կամ սոցիալական փոխազդեցությունների ոչ վերբալ չափումները կարող են լրացնել առաջնորդության վերաբերյալ հետազոտությունները, մասնավորապես՝ թե ինչպես է միջանձնային դինամիկան ազդում առաջնորդության վրա<sup>1</sup>:

Սոցիոմետրիան օբյեկտիվ է և ավելի դժվար է մանիպուլյացիայի ենթակա, քան ավանդական մեթոդները, ինչպես օրինակ՝ ինքնազննարկման հարցումները: Համալիր հետազոտությունների համար կիրառվում են նաև տեղեկատվության ժամանակակից կրիչներ՝ արագացուցիչներ, ինֆրակարմիր և Bluetooth սենսորներ, GPS համակարգեր՝ խմբի անդամների դիրքն ու մոտիկությունն ուսումնասիրելու, ինչպես նաև խոսքի տոնն ու ձայնը չափող ավտոմատ ձայնագրիչներ՝ անձնական հաղորդակցությունը ուսումնասիրելու և սոցիալական փոխազդեցությունները վերլուծելու համար<sup>2</sup>:

Այսպիսով՝ ռազմասոցիոլոգիական ուսումնասիրությունները կոչված են նպաստելու զինված ուժերի մարտունակության բարձրացմանը, զինվորական կոլեկտիվում միջանձնային և միջխմբային հարաբերությունների կարգավորմանն ու կառավարմանը, զինվորականների մարտական ոգու բարձրացմանն ու բանակ-հասարակություն կապի ամրապլնմանը, այդ բնագավառում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու լուծմանը:

### **Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների պատմությունը ՀՀ ՁՈՒ-ում**

Հայկական բանակը ժառանգել է ԽՍՀՄ անվտանգության համակարգի կառուցվածքն ու ինստիտուցիոնալ բաղադրիչները: 1993 թվականից ՀՀ ՊՆ կազմում գործող ԱՀՏԱ վարչությունը (2019 թվականից՝ ՀՀ ՁՈՒ բարոյահոգեբանական ապահովման վարչություն) իրականացնում է զինված ուժերի բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը, այդ թվում՝ զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների համակողմանի, մանրակրկիտ ուսումնասիրումը<sup>3</sup>: Վերը նշված ուսումնասիրությունների իրականացման ընթացքում անխուսափելիորեն կիրառվել է սոցիոլոգիայի տեսամեթոդաբանական պաշարը, իսկ որոշ դեպքերում էլ՝ բուն սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանությունը և մեթոդական գործիքակազմը, սակայն ոչ միշտ է հետազոտությունը նույնականացվել և անվանվել «սոցիոլոգիական»: 2012 թ. ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի և համագործակցող կազմակերպությունների աջակցությամբ՝ ՀՀ ՊՆ 6 զորամասերում իրականացվել է ծավալուն սոցիոմետրիկական հետազոտություն<sup>4</sup>, իսկ 2015 թ. ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի մասնագետների կողմից, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, իրականացվել է հարցաթերթիկային հարցում<sup>5</sup>: Անվտանգության քաղաքականության համատեքստում շրջադարձային նշանակություն ունեցավ «Ազգ-բանակ» հայեցակարգը, որի շրջանակում ձևակերպվեց բանակի և հասարակության փոխհարաբերությունների ռազմավարությունն ու տեսլականը: 2017 թ. ՀՀ ՊՆ «Ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակում մեկնարկեց «Դիտակետ» սոցիոլոգիական հետազոտությունը, որը կատարվել է զորացրված ժամկետային զինծառայողների շրջանում<sup>6</sup>:

<sup>1</sup> Uhl-Bien M., *Relational leadership theory: Exploring the social processes of leadership and organizing. The Leadership Quarterly*, 2006, 17, 654-676.

<sup>2</sup> Olguin Olguin D., Pentland A., *Social sensors for automatic data collection. Proceedings for the 14<sup>th</sup> Americas Conference on Information Systems. Toronto, ON, August 2008, pp. 171-180.*

<sup>3</sup> ՀՀ ՁՈՒ բարոյահոգեբանական ապահովման վարչություն, ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, <http://www.mil.am/hy/structures/29>, 13.05.2020 թ.

<sup>4</sup> Աթանեսյան Ա., Մկրտչյան Ա. և ուրիշներ, *Նշվ. աշխ.*, էջ 20:

<sup>5</sup> Աթանեսյան Ա., *Հայաստանում բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները «Ազգ-բանակ» հայեցակարգային մոդելի մշակման համատեքստում*, «Հայկական բանակ», 4 (90), 2016, էջ 132:

<sup>6</sup> ՀՀ ՊՆ «Դիտակետ» ծրագիր, ԲՐԵՎԻՍ ընկերություն, «ԴԻՏԱԿԵՏ» Չինվորական ծառայության պայմաններից պորագրվածների գոհունակության գնահատում, *Սոցիոլոգիական հետազոտություն կորագրվածների հետ*, Երևան, 2018:

### Սոցիոմետրիկական մեթոդիկայի կիրառումը գինված ուժերում

Չինվորական ենթամշակույթի և ձևավորված ավանդույթների ազդեցությամբ ոչ ֆորմալ հարաբերությունները ձեռք են բերում սոցիալական վերահսկողության գործառնություններ: Արդյունքում առաջանում են անհամապատասխանություններ ֆորմալ կանոնադրական և ոչ ֆորմալ հուզական և ավանդույթային փոխհարաբերությունների միջև: Օրինակ՝ դասակր՝ որպես մարտական միավոր, ֆորմալ սոցիալական խումբ է, որի անդամների դիրքը և վարքը խիստ կանոնակարգված են գինված ուժերի կանոնադրություններով: Միևնույն ժամանակ՝ ստորաբաժանման գինծառայողների միջանձնային փոխհարաբերությունների, ընդհանուր հետաքրքրությունների և փոխադարձ համակրանքի արդյունքում ձևավորվում են ոչ ֆորմալ խմբեր: Այսպիսի ներխմբային ոչ ֆորմալ փոխհարաբերությունները կարելի է ուսումնասիրել սոցիոմետրիկական մեթոդի միջոցով: Սոցիոմետրիկական հարցումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու ինչպես ֆունկցիոնալ, այնպես էլ հուզական միջանձնային փոխհարաբերությունները:

Սոցիոմետրիկական տեխնիկան հնարավորություն է տալիս չափելու նաև ստորաբաժանման համախմբվածության աստիճանը: Դասակը կարող է իր մեջ ներառել ոչ ֆորմալ փոքր խմբեր, որոնք կարող են կոնֆլիկտային հարաբերություններ ունենալ իրար հետ: Այդպիսի ենթախմբերի առկայությունը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ մարտական առաջադրանքների կատարման ժամանակ: Դասակում նմանատիպ բևեռացվածության առկայությունը բացասաբար է անդրադառնում նաև զինվորական կարգապահության վրա:

Սոցիոմետրիկական տեխնիկան հնարավորություն է տալիս բացահայտելու դասակի անդամների սոցիոմետրիկական դիրքը՝ կախված դասակի գինծառայողների կողմից կոնկրետ գինծառայողի նկատմամբ համակրանքի կամ հակակրանքի առկայությունից կամ բացակայությունից: Միշտ չէ, որ դասակի հրամանատարը և ոչ ֆորմալ առաջնորդը նույն անձնավորությունն է: Կանոնադրական պարտականությունների կատարման հետ կապված հաճախ առաջանում են կոնֆլիկտներ ֆորմալ և ոչ ֆորմալ առաջնորդների միջև: Արդյունքում երբեմն, խմբի հեղինակավոր անդամների ճնշմամբ, դասակի ֆորմալ հրամանատարը վերածվում է ձևական, դեկլարատիվ առաջնորդի, որը չունի իրական իշխանություն: Այս տեխնիկան հնարավորություն է տալիս բացահայտելու դասակի ոչ ֆորմալ առաջնորդներին, որոնք առավելագույն հեղինակությունն ունեն խմբում: Սա հնարավորություն կտա վերադաս հրամանատարությանը՝ ընդունելու առավել արդյունավետ կադրային որոշումներ: Սոցիոմետրիկական տեխնիկան հնարավորություն է տալիս նաև բացահայտելու դասակի «աուտսայդեր», «մերժված» անդամներին: Դրանք խմբի առավել ցածր սոցիոմետրիկական գնահատականներ ստացած գինծառայողներն են: Որպես կանոն՝ նրանց փոխգործողությունները մյուս գինծառայողների հետ խիստ սահմանափակ են: Այդպիսի «մերժվածները» կարող են լինել շեղվող վարք և հոգեբանական խնդիրներ ունեցող գինծառայողներ կամ զինվորական չգրված նորմերը խախտողներ: Երբեմն այդպիսի «մերժված» գինծառայողները հաղորդակցվում են իրար հետ՝ ստեղծելով փոքր սոցիալական խմբեր<sup>1</sup>:

Սոցիոմետրիկական հարցումները ենթադրում են գաղտնիություն խմբի անդամների համար, և հարցվողների անուններին և պայմանական համարներին առնչվող աշխատանք կատարելու իրավունք ունի միայն հարցումն իրականացնող մասնագետ-սոցիոլոգը: Հարցվողները պետք է վստահ լինեն, որ իրենց կողմից տրված պատասխանները գաղտնի են և չեն դառնա խմբում քննարկման առարկա, կոգտագործվեն գինված ուժերի ստորաբաժանումներում իրական առաջնորդների բացահայտելու, նրանց ներուժը կառուցողական նպատակներին ծառայեցնելու և այդ ստորաբաժանումների մարտունակությունը բարձրացնելու նպատակով: Յուրաքանչյուր գինծառայող իր համարն է ստանում և նշում այն իր հարցաթերթում՝ գրելով նաև այն գինակիցներին, որոնց ընտրում է որպես տվյալ հարցի

<sup>1</sup> Գալստյան Վ., Սոցիոմետրիկական տեխնիկայի կիրառության հնարավորությունները գինված ուժերում իրականացվող սոցիոլոգիական հետապոտություններում, «ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի տարեգիրք - 2008», էջ 198-200:

պատասխան: Նմանատիպ հարցերի ձևակերպումն ու ընդգրկումը սոցիոմետրիկական քարտում կախված է ուսումնասիրվող խմբի առանձնահատկություններից, օրինակ՝ խմբի անդամների առջև դրված աշխատանքային կամ ծառայողական պարտականությունների բնույթից: Չինծառայողներից յուրաքանչյուրը, ինքնուրույն և առանց զինակիցների և հարցումն իրականացնող սոցիոլոգների միջամտության, պատասխանները լրացնում է սոցիոմետրիկական քարտի մեջ, որտեղ յուրաքանչյուր մասնակցի անունը համարակալվում է:

**Մեթոդաբանություն**

Սոցիոմետրիկական հետազոտությունն իրականացվել է անկետավորման մեթոդով (Computer-Assisted Self Interviewing: CASI)՝ ՀՀ ՊՆ N գորամասի 12 զինծառայողներից բաղկացած ստորաբաժանման հետ: Հարցմանը մասնակցել են տվյալ ժամանակահատվածում հասանելի 9 զինծառայողները: Հարցումն անանուն է, արդյունքները ներկայացվում են ընդհանրացված տեսքով: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2021 թ. ապրիլի 2-ին, ՀՀ ՊՆ N գորամասի լսարանում: Չինված ուժերում սոցիոմետրիկական հարցման իրականացումն ունի իր առանձնահատկությունները, որոնք պետք է հաշվի առնվեն սոցիոմետրիկական չափանիշների և հարցերի ընտրության ժամանակ: Սոցիոմետրիկական հարցման ժամանակ զինծառայողներին խնդրում ենք պատասխանել հետևյալ 6 հարցերին, որոնցից 1-ինը, 3-րդը, 5-րդը դրական կշանակության հարցերն են, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ հարցերը՝ բացասական: Հարցերին պատասխանելիս յուրաքանչյուր մասնակցից դասակարգում է իր զինծառայակիցներին՝ ըստ առաջնահերթության:


1. *Ձեր զինծառայակիցներից ո՞ւմից կինտրոլեք օգնություն ցույց տալ բարդ աշխատանքներ կատարելիս:*
2. *Ձեր զինծառայակիցներից ո՞ւմից խորհուրդ չեք հարցնի խնդրահարույց իրավիճակում հայտնվելու դեպքում:*
3. *Ձեր զինծառայակիցներից ո՞ւմ հետ կցանկանայիք կատարել մարտական վտանգավոր առաջադրանքներ:*
4. *Ձեր զինծառայակիցներից ո՞ւմ հետ չեիք ցանկանա զնալ հետախուզության:*
5. *Ձեր զինծառայակիցներից ո՞վ ամենալավը կիրականացնի հրամանատարական պարտականությունները:*
6. *Ձեր զինծառայակիցներից ո՞վ կդժվարանա առաջնորդել ստորաբաժանումը:*

**Վերլուծական արդյունքներ**

Այսպիսով՝ վերլուծությունն իրականացվել է՝ հիմնվելով 6 հարցերի և 9 մասնակիցների՝ ըստ առաջնահերթության դասակարգված պատասխանների ցուցանիշների վրա:

	Մ-1	Մ-2	Մ-3	Մ-4	Մ-5	Մ-6	Մ-7	Մ-8	Մ-9	Մ-10	Մ-11	Մ-12
Ձեր զինծառայակիցներից ո՞ւմից կինտրոլեք օգնություն ցույց տալ բարդ աշխատանքներ կատարելիս:	5.00	6.25	4.00	6.25	4.63	7.88	9.50	8.75	2.88	6.67	5.22	5.11
Ձեր զինծառայակիցներից ո՞ւմ հետ կցանկանայիք կատարել մարտական վտանգավոր առաջադրանքներ:	4.50	5.00	4.50	4.50	5.50	6.25	8.50	6.88	4.75	8.33	7.22	5.67
Ձեր զինծառայակիցներից ո՞վ ամենալավը կիրականացնի հրամանատարական պարտականությունները:	2.00	4.25	5.88	6.38	6.38	7.38	8.38	6.75	3.50	8.00	6.56	6.22
Ձեր զինծառայակիցներից ումի՞ց խորհուրդ չեք հարցնի խնդրահարույց իրավիճակում հայտնվելիս:	4.38	5.25	3.38	3.88	3.25	3.13	9.00	7.38	3.50	6.89	4.78	5.00
Ձեր զինծառայակիցներից ո՞ւմ հետ չեիք ցանկանա զնալ հետախուզության:	5.50	5.75	3.75	4.13	3.88	5.00	7.88	5.50	4.50	5.89	5.22	3.11
Ձեր զինծառայակիցներից ո՞վ կդժվարանա առաջնորդել սպայական խումբը:	4.50	3.88	2.75	3.75	3.63	6.13	9.13	6.50	4.00	6.78	4.89	4.00
<b>Ընդհանուր Հանրագումար</b>	<b>4.31</b>	<b>5.06</b>	<b>4.04</b>	<b>4.81</b>	<b>4.54</b>	<b>5.96</b>	<b>8.73</b>	<b>6.96</b>	<b>3.85</b>	<b>7.09</b>	<b>5.65</b>	<b>4.85</b>

Աղյուսակ 1. Սոցիոմետրիկական վերլուծության սանդղակ



Գծապատկեր 1. Սոցիոմետրիկական վերլուծության ցուցանիշներ

Ըստ սոցիոմետրիկական վերլուծության ցուցանիշների՝ «Մ-7»-ը համեմատաբար «մերժված»/«աուլթսայդեր» է, «Մ-9»-ը ոչ ֆորմալ առաջնորդության մեծ պոտենցիալ ունի, իսկ առաջնորդության պոտենցիալ՝ «Մ-3»-ը: Հարկ է ընդգծել, որ ստորաբաժանման ֆորմալ առաջնորդը «Մ-12»-ն է, որը չունի առաջնորդական ընդգծված ցուցանիշներ:

Սոցիոմետրիկական ուսումնասիրության վերլուծության փուլում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զինծառայողների պաշտոնական բարձր կարգավիճակը երբեմն չի համընկնում իրենց հանդեպ իրական վստահության բարձր մակարդակի հետ: Կարող են առաջանալ կոնֆլիկտներ ֆորմալ և ոչ ֆորմալ առաջնորդների միջև՝ կապված կանոնադրական պարտականությունների կատարման և խմբում առաջնորդության ստանձնման հետ: Արդյունքում խմբի հեղինակավոր անդամների ճնշմամբ՝ դասակի ֆորմալ հրամանատարը կարող է վերածվել ձևական, դեկլարատիվ առաջնորդի, որը չունի իրական իշխանություն: Սոցիոմետրիկական մեթոդիկական հնարավորությունն տվեց բացահայտելու ստորաբաժանման ոչ ֆորմալ առաջնորդներին, որոնք առավելագույն հեղինակությունն ունեն խմբում: Սա հնարավորություն կտա վերադաս հրամանատարությանը՝ ընդունելու առավել արդյունավետ կադրային որոշումներ՝ ընդհուպ մինչև ոչ ֆորմալ առաջնորդին խրախուսել և դարձնել ֆորմալ առաջնորդ:

Սոցիոմետրիկական տեխնիկայի միջոցով մենք նաև բացահայտեցինք ստորաբաժանման «աուլթսայդեր»՝ «մերժված» անդամներին: Դրանք խմբի առավել ցածր սոցիոմետրիկական գնահատականներ ստացած զինծառայողներն են: Որպես կանոն՝ նրանց փոխգործողությունները մյուս զինծառայողների հետ խիստ սահմանափակ են:

### Եզրակացություն

Հետազոտության արդյունքում մեզ հաջողվեց հայտնաբերել զինծառայողների խմբի ոչ ֆորմալ առաջնորդներին, և, ինչպես պարզվեց, բարձր պաշտոն ունեցող զինծառայողները տվյալ խմբի իրական առաջնորդները չէին:

Դասակում առկա իրավիճակը պարունակում է ռիսկեր, քանի որ ոչ կանոնադրական հարաբերությունները զինվորական կոլեկտիվում առաջնորդության ոչ ֆորմալ մեխանիզմների կիրառման փորձ են, որ կարող է հրամկազմի կողմից կիրառվել որպես երկրորդական, ուղեկցող միջոց՝ կառավարման կանոնադրական մեխանիզմներին զուգընթաց, ինչը կոչված է նպաստելու զինվորական կոլեկտիվում մարդկային ջերմ հարաբերությունների ստեղծմանը, համագործակցության և նախաձեռնողականության խրախուսմանը, արդյունքում՝ անձի զարգացմանը զինծառայության ընթացքում: Սակայն եթե ոչ ֆորմալ առաջնորդությունը կանոնակարգված չէ, սկսում է փոխարինել զինվորական կոլեկտիվի կառավարման ֆորմալ մեխանիզմներին և հակասում է զինծառայության կանոնադրական նորմերին ու կանոններին, ուստի երբեմն հանգեցնում է շեղվող, անգամ՝ արատավոր և հանցավոր վարքագծի:

**Армен Хачикян, ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИХ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА.** Проблема лидерства военнослужащих в Вооруженных Силах подлежит многофакторному комплексному измерению, для целей которого данная статья базируется на военно-социологической методологии, применяя социометрический метод. Важность социометрических исследований в Вооруженных Силах РА обусловлена прежде всего тем, что смешанный принцип набора (сочетание принципов призыва и контракта), а также сочетание формальных и неформальных групп, моделей лидерства в группах военнослужащих создают социальные процессы в армии, конфликтный характер которых делает необходимым мониторинг и управление человеческим фактором. Применение метода позволило измерить лидерство среди военнослужащих, выявив неформальных лидеров.

**Ключевые слова:** Армянская армия, вооруженные силы, военная социология, военно-социологические исследования, воинский коллектив, социометрия, военное лидерство.

**Armen Khachikyan, MILITARY-SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN A MILITARY TEAM. APPLICATION OF THE SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES.** The issue of leadership among servicemen in the Armed Forces is subject to multifactorial, comprehensive measurement, for the purpose of which this article is based on military-sociological methodology, and thus the sociometric method is applied. The importance of sociometric studies in the RA Armed Forces is conditioned especially by the fact that the mixed principle of recruitment (combination of conscription and contract principles), as well as the combination of formal and informal groups, leadership models in the military staff and relative conflicts create the need to constantly monitor and manage the human factor of social processes taking place within the army. The application of the method made it possible to find the measurement of leadership among servicemen, identifying informal leaders.

**Keywords:** Armenian army, armed forces, military sociology, military-sociological research, military team, sociometry, military leadership.



**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**

**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**

**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**2021, № 1**

**Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան**  
**խմբագիր՝ Միքայել Մալխասյան**  
**Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան**  
**Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի**  
**Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի**

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52  
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52  
Address: 0025, Yerevan, Abovyan 52  
E-mail: histcultjournal@gmail.com  
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1  
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1  
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

**Տպաքանակը՝ 200**